ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 փետրվարի 2014թ. N3*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2013թ բյուջեի կատարման մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*28 փետրվարի 2014թ. N4*

## 1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2013թ համայնքի բյուջեի կատարման մասին և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին" 16-րդ հոդվածի 3-րդ կետով *Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2013թ բյուջեի կատարման մասին /կցվում է հաշվետվությունը/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ

ՀԱՄՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի 2013թ բյուջեն կատարվել է 100.2%, այդ թվում սեփական եկամուտների մասով 103.7%:

Հարկային եկամուտների կատարողականը կազմվել է 105.2%, այդ թվում գույքահարկը կատարվել է 105.4%, որից իրավաբանական անձանց վճարումների հաշվին 106.3%, ֆիզիկական անձանց վճարումների հաշվին 101.4%:

Ընդամենը տուրքերը կատարվել են 109.7%, այդ թվում պետական տուրքերի գծով 118,9%, տեղական տուրքերի գծով 103,0%:

Ոչ հարկային եկամուտները կատարվել են 98,1%:

Ֆոնդային բյուջեն կատարվել է 103,8%: Համայնքի բյուջեի ծախսային մասը կատարվել է 98,0%, այդ թվում կրթության բնագավառում նախատեսված ծախսումները կատարվել են 100%, մշակույթ և սպորտի բնագավառը 99,8%, աղբահանություն և սանմաքրման ծախսերը՝ 99,9%, ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 100%:

Ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվության համար գանձվող տուրքը 2013թ կազմվել է 1528.5 հազար դրամ կամ 100.3%: Մարդատար տաքսիների թույլտվության համար գանձվող տուրքը կազմվել է 219,6 հազար դրամ կամ 99,8%:

Գովազդների մասով նախատեսված 2599,0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 2641,7 հազար դրամ կամ 101,6%: Բացօթյա վաճառքի թույլտվության համար գանձվել է 846.000 դրամ կամ 108%:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի թույլտվության համար գանձվել է 292,1 հազար դրամ կամ 97,4%, վառելիքաքսայուղերի, խտացված գազերի վաճառքի թույլտվության համար գանձվել է 1149,4 դրամ կամ 95,8%:

2013թ ընթացքում Իջևան քաղաքի վարչական տարածքում տեղադրվել են երթևեկությունը կարգավորող նշաններ և լուսացույցներ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 9.500.000 դրամ:

Իրականացվել են Իջևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքներ, որոնց ընդհանուր գումարը կազմել է 6.000.000 դրամ:

Հիմնանորոգվել են Իջևան քաղաքի գունաերաժշտական շատրվանները: Ընդհանուր արժեքը կազմել է 26.000.000դրամ, որից 14.000.000 դրամը ներդրել է ամերիկյան Քաունթերփարթ ինթերնեյշնլ միջազգային կազմակերպությունը, 12.000.000 դրամը՝ քաղաքապետարանը:

Ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ կազմակերպվել են ստուգայցեր Իջևան քաղաքի փողոցների բացօթյա ապօրինի առևտուրը կանոնակարգելու նպատակով:

Ստուգայցեր են կազմակերպվել նաև պետեկամուտների կոմիտեի աշխատակիցների հետ համատեղ Իջևան քաղաքում տաքսի ծառայության գործունեությունը իրավական դաշտ տեղափոխելու համար:

Քաղաքապետարանին պատկանող ,,Մերսեդես" մակնիշի ավտոբուսը հատկացնել է վետերաններին, ուսանողներին, դպրոցներին էքսկուրսիաներ մեկնելու համար:

2013թ հիմնանորոգվել և վերանորոգվել են Անկախության փողոցի մի հատվածի՝ Ա.Մելիքբեկյան փողոցի հետ հատվող խաչմերուկից դեպի Գանիևի փողոցի հետ հատվող խաչմերուկի ձախակողմյան մայթը /10 մլն 93 հազար 700 դրամ/:

Կառուցվել է գյուղմթերքների և պտուղ-բանջարեղենի ժամանակավոր բացօթյա առևտրի համար շվաքարան/ 990.000 դրամ/:

Վերանորոգվել են Իջևան քաղաքի թիվ 1 մանկապարտեզի խմբասենյակը և թիվ 5 մանկապարտեզի աշխատասենյակը /877.216 դրամ/, մեկ աշխատասենյակը և բուժկետը /487.404 դրամ/:

Վերանորոգվել է նաև քաղաքապետարանի վարչական շենքի 2-րդ հարկի երկու աշխատասենյակները / 486.826 դրամ/:

Բարեկարգվել է թիվ 3 գերեզմանատան ճանապարհը /գումարը՝ 714.700 դրամ/:

2013թ ընթացքում վերագործարկվել և վերականգնվել են

Սպանդարյան 9 /2.400.000 դրամ/, Բլբուլյան 84 /2.350.000 դրամ/, Բլբուլյան 87 /2.350.000 դրամ/, Մետաղագործների 9 /2.350.000 դրամ/ բարձրահարկ շենքերի վերելակները:

Տարվա ընթացքում պարբերաբար իրականացվել են

Փողոցների գրունտային ճանապարհների փոսային հարթեցման, բարեկարգման,հուշարձանների և շրջակայքի բարեկարգման, վերանորոգման, շենքերի տանիքների մասնակի վերանորոգման,գետերի և հենապատերի, ավելորդ զանգվածներից, սելավատարների մաքրման, կանաչապատ տարածքների և նոր ծառերի, թփերի ավելացման, քաղաքի բոլոր հատվածներում

տեղադրված նստարանների վերանորոգման, ներկման,թափառող շների ոչնչացման աշխատանքներ:
«Լավագույն համայնք 2013» մրցանակաբաշխության շրջանակում , կանաչապատ համայնք անվանակարգում հատուկ մրցանակը շնորհվել է Իջևան քաղաքին:

Իջևանի քաղաքապետարանի տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի կողմից 2012թ կատարվել են՝

- ճանապարհային ձևով հողամասերի օտարում՝ 35 հատ,
- մրցութային ձևով հողամասերի տրամադրում՝ 29 հատ,
- տնատիրությունների և օբյեկտների հասցեավորումներ՝-130 հատ,
- բնակելի կառուցապատման հողամասերի և շինությունների հիմքերի վերականգնում ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների" օրենքին համաձայն՝ 172 հատ,
- վերահասցեավորում՝ 14 հատ,
- հողամասերի և ինքնակամ կառույցների համայնքային սեփականության ճանաչում՝ 22 հատ,
- հողամասերի սահմանների ճշտում՝ 26 հատ,
- հողամասերի ենթավարձակալության համաձայնեցում՝ 0 հատ,
- հողամասերի ընդլայնում՝ 4 հատ,
- անհատական բնակելի տների 300.0քմ -ից ավել հողամասերի ուղղակի վաճառք՝ 21 հատ,
- ինքնակամ հասարակական կառույցների օտարում՝ 32 հատ,
- նախապատվության իրավունքով ուղղակի վաճառք՝ 12 հատ,
- հողամասերի անհատույց օտարում՝ 1 հատ,
- կառուցապատման իրավունքով հողամասի տրամադրման՝ 30 հատ,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրում՝ 55 հատ,
- շինարարության թույլտվությունների տրամադրում՝ 43 հատ,
- շինարարության շահագործման փաստագրման ակտերի տրամադրում՝ 15 հատ:

Իջևան համայնքում 2013թ. կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ նվիրված հանրապետության հիշարժան օրերին ու տարեթվերին, ավանդական հանդիսություններին: Միջոցառումները կազմակերպվել են արվեստի դպրոցի, երաժշտական դպրոցի, մշակույթի տան, ,,Ավանդույթ,, ՓԲԸ-ի ուժերով և քաղաքապետարանի անմիջական աջակցությամբ ու ղեկավարությամբ:

- Հունվարի 28-ին մշակույթի տանը կազմակերպվել է միջոցառում նվիրված հայոց բանակի օրվան:
- Փետրվարի 13-ին ,,Ավանդույթ,, ՓԲԸ-ի ուժերով, Սուրբ Ներսես Շնորհալի եկեղեցու հետ համատեղ իրականացվել է միջոցառում նվիրված Տյառնընդառաջ տոնին:
- Մշակույթի տանը ապրիլի 7-ին արվեստի դպրոցի և երաժշտական դպրոցի ուժերով նշվել է մայրության և գեղեցկության տոնը:
- Ապրիլի 22-ին Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցում և ապրիլի 24-ին Եղեռնի հուշարձանում կազմակերպվել է Հայոց մեծ եղեռնի 98-րդ տարելիցին նվիրված միջոցառում:
- Մայիսի 9 -ին նշվել է հաղթանակի օրը:
- Մայիսի 18-ին ,,Թանգարանային գիշեր,, համաևրոպական միջոցառման շրջանակներում Իջևան քաղաքի պատմաերկրագիտական թանգարանում կազմակերպվել են միջոցառումներ:
- Մայիսի 30 -ին երաժշտական դպրոցում մեծ շուքով նշվել է կրթօջախի 55-րդ տարեդարձը:
- Հունիսի 1-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան, նշվել է արվեստի դպրոցի 35-րդ տարեդարձը:
- Հունիսի 28-ին Իջևանի մշակույթի տանը կազմակերպվել է Ակնթարթում մի ամբողջ կյանք՝ հոբելյանական միջոցառումը, որը նվիրված էր գրող, լրագրող Ռուբեն Սիմոնյանի 75-ամյակին:
- Սեպտեմբերի 21-ին Ազատամարտիկների հրապարակում մեծ շուքով նշվել է անկախության օրը:
- Հոկտեմբերի 18-ին Իջևանի քաղաքապետարանի և ԱԱՊԿ-ի համատեղ ծրագրի արդյունքում բացվել է երեխայի զարգացման 2 կենտրոն:
- Սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսներին կազմակերպվել է սիմպոզիում, որի նպատակը Իջևան քաղաքի մշակութային ժառանգության հարստացումն ու պահպանումն էր: Արդյունքում վերականգնվել և նաև ստեղծվել են արվեստի նոր, ժամանակակից գործեր:
- Հոկտեմբերի 25-ին Իջևանում կազմակերպվել է արվեստի փառատոնի բացման արարողություն:
- Հոկտեմբերի 21, 23, 24-ին, դեկտեմբերի 23, 24, 25-ին մշակույթի տանը կազմակերպվել են թատերական ներկայացումներ: Հուլիս- օգոստոս ամիսներին կազմակերպվել են ,,Հայֆիլմ"

կինոնկարների անվճար կինոցուցադրումներ: Օգոստոսի 9-ից 13-ը կազմակերպվել է հնդկական ֆիլմերի փառատոն: Համերգային ծրագրով հանդես է եկել Սուսաննա Սաֆարյանը: Նոյեմբերի 15-ին կայացել է «Ոսկե ծիրանն անիվների վրա» վավերագրական ֆիլմերի փառատոն. Ցուցադրվել է «Մեր դպրոցը» ֆիլմը:

- Մարտ, ապրիլ, մայիս, հուլիս, օգոստոս և հոկտեմբեր ամիսներին ,,Վերնատուն,, ՓԲԸ-ում կազմակերպվել են ցուցահանդեսներ և ցուցահանդես-մրցույթներ:

- Դեկտեմբերի 26-ից մինչև 28-ը կազմակերպվել են բացօթյա ամանորյա միջոցառումներ: Միջոցառմանը մասնակցել են արվեստի դպրոցի, երաժշտական դպրոցի, մշակույթի տան, ,,Ավանդույթ,, ՓԲԸ-ի սաները:

- Դեկտեմբերի 28-ին հանրապետության ճանաչված երգիչ-երգչուհիների մասնակցությամբ կազմակերպվել է ամանորյա համերգ և հրավառություն:

- Հանրակրթական դպրոցի1-4 դասարանների աշակերտներին, մանկապարտեզի սաներին, Հույսի կամուրջ հաճախող հաշմանդամ երեխաներին և ,,ՍՕՍ,, մանկական գյուղի սաներին հանձնվել են ամանորյա նվերներ:

- Ձոհված ազատամարտիկների ընտանիքներին տրվել է ֆինանսական օգնություն:

- Երաժշտական դպրոցի սաները մասնակցել են Գյումրի քաղաքում կազմակերպված ,,Վերածնունդ,, մրցույթ փառատոնին և արժանացել 2-րդ կարգի դափնեկրի կոչման, ինչպես նաև ,,հանդիսատեսի համակրանք,, մրցանակի:

Արվեստի դպրոցի ,,Փյունիկ,, պարային համույթի սաները նույնպես մասնակցել են բազմաթիվ պարային փառատոնների և արժանացել մրցանակների և պատվոգրերի:

- Արմավիրի մրցույթ փառատոնում մենապարը արժանացել է 3-րդ կարգի մրցանակի:

- ,,Նազանք,, պարի հանրապետական մրցույթ փառատոնում արժանացել են առաջին կարգի 1 և երկրորդ կարգի 3 դիպլոմների: մասնակցել են Երևանում կազմակերպված Անկախության տոնի միջոցառմանը և Հյուսիսային պողոտայում կազմակերպված տոնական համերգին, ինչպես նաև Սևանի ափի պարի փառատոնին և Ապարանի մատուռի բացման տոնական միջոցառմանը:

,,Ավանդույթ,, ՓԲԸ-ի սաները նույնպես մասնակցել են փառատոնների: Գյումրիում կազմակերպված ,,Վերածնունդ,, ,Դիլիջանի հանրապետական փառատոններից վերադարձել են պատվոգրերով:

Մարզադպրոցի մարզիկները մասնակցել են ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված ազատ ոճի ըմբշամարտի, սամբո- ըմբշամարտի, բռնցքամքրտի և ֆուտբոլի մի շարք մրցաշարերի: Չերնոգորիայում կայացած ազատ ոճի ըմբշամարտի պատանիների Եվրոպայի առաջնությունում մարզադպրոցի սան Վահե Մատինյանը դարձել է 2-րդ մրցանակիր:

- Սամբո- ըմբշամարտի, ազատ ոճի ըմբշամարտի և բռնցքամքրտի պատանիների և երիտասարդների առաջնություններում մի շարք մարզիկներ դարձել են 2-րդ և 3-րդ մրցանակակիրներ:

- Փետրագնդակի Հայաստանի առաջնության զուգախաղերում արժանացել են 3-րդ մրցանակի: